

«ՏԱՆՈՒՏՐՈՒԹԻՒՆ» ՏԵՐՄԻՆԸ ԱՆԻԻ XI ԴԱՐԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ս. Ա. ԱՎԱԳՅԱՆ

Այս տերմինը յորժամ առին զտաճուտութիւնս կապակցութեան մեջ վկայված է Անիի բյուզանդական կատեպան Բագրատ մագիստրոսի ընդարձակ արտոնագրում, որը փորագրվել է Մայր տաճարի արեւմտյան պատին 1058—1060 թթ. և հաղորդում է քաղաքի բնակիչների հարկերն ու պարտույթները նվազեցնելու կամ իսպառ վերացնելու մասին: Արձանագրությունը դեռեւս անցյալ դարի կեսերին առաջին անգամ ընդօրինակվել է և ավելի ուշ հրատարակվել է Ն. Սարգիսյանի տեղագրական երկում¹, այնուհետև բնագիրը ֆրանսերեն թարգմանությամբ և մանրամասն վերլուծականով Աբիխի էստամպով² վրայից վերծանել և հրատարակել է Բրոսսեն²: Հետագա յոսանամյակներում կատեպան Բագրատի արտոնագիրը առավել կամ պակաս հարազատութեամբ հրատարակել են նաև Ս. Ջալալյանցը, Ղ. Ալիշանը, Մ. Գևորգյանցը, Կ. Բաումաշյանը և ուրիշներ: Բնագրի գիտական-քննական առավել սպառիչ հրատարակությունը մանրամասն ծանոթագրություններով և արձանագրության լուսանկարով 1921 թ. իրականացրել է Վ. Բենեշեկիշը՝ Անիի բյուզանդական շրջանի (1045—1064 թթ.) արձանագրություններին նվիրված հատուկ ուսումնասիրության մեջ, որը 1913 թ. Անիի հնագիտական արշավախմբի կազմում հեղինակի կատարած հետազոտությունների արգասիքն էր³: Նույն բնագիրը Անիի մյուս արձանագրությունների հետ ժամանակին, քաղաքի պեղումների ընթացքում, ընդօրինակել և վերծանել էր նաև Հ. Օրբելին, սակայն, դեպքերի բերումով, դեռևս 1920 թ. տպագրության պատրաստ ժողովածուն հրապարակ եկավ միայն վերջերս⁴: Ահա կատեպան Բագրատի քննվող բնագիրը ըստ Վ. Բենեշեկիշի և Հ. Օրբելու՝ բացառիկ նույնական ընդօրինակության.

ԱՆՈՒԱՄԲՆ ՄՆ ԱՄԵՆԱԿԱԼԻ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ՄԲ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԹԱ-
ԳԱՒՈՐԻՆ ԿՈՍՏԱՆԴԵԱ ԴՈՒԿԻ, ԿԱՄ ԵՂԵԻ ԻՄ ԲԱԳՐՏԱ ՄԱԳԻՍՏՐՈՍԻՍ ԵՒ
ԱՐԵՒԵԼԻՑ ԿԱՏԱՊԱՆԻՍ ՎԵԿԱՅՈՅՍ: ԱՌՆԵԼ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՍ
ԱՆԻՈ: ՅՈՐԺԱՄ ԱՌԻՆ ՋՏԱՆՈՒՏՐՈՒԹԻՒՆՍ ՄԽԻԹԱՐ ԻՊԱՏՈՍՆ ԿՐՏԻՆ ՈՐԴԻՆ:
ԵՒ ԳՐԵԳՈՐ ԼԱՊԱՍՏԱԿԱ ՈՐԴԻՆ ՍՊԱԹԱՐ ԿԱՆԿԻՏԱՏՆ: ԵՒ ՍԱՐԳԻՍ ԱՐՏԱ:

¹ Տէս Ն. Սարգիսյան, Տեղագրությունք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1862, էջ 120:

² Տէս M. Brosset, Rapports sur un voyage archeologique dans la Georgie et dans l'Arménie, Pet., 1849, էջ 95

³ В. Н. Бенешевич, Три Ангийские надписи..., Петербург, 1921. Մեջ է ընկնում կատեպան Բագրատի արձանագրության մատենագիտությունը: Բացի դրանից տե՛ս նաև Ն. Սարգիսյանց, Համառոտ տեղագրություն հնությանց մեծին Շիրակա և մայրաքաղաքին Անիոյ, Ալեքսանդրապոլ, 1903, էջ 33; K. Basmadjian, Les inscriptions Armeniennes d'Ani, de Bagnair et de Marmachen, Paris, 1931, № 23.

⁴ Հ. Օրբելի, Դիվան հայ վիճագրության, պր. 1, Երևան, 1966, էջ 47:

ԻԱԶԱ ՈՐԴԻՆ ՍՊԱԹԱՐ ԿԱՆԿԻՏԱՏՆ ԵՒ ԱԶԱՏԵՑԻՆ ԶՎԵՑԿԷ ԿՈՌԻ, ԵՒ ԶՄԱՅԼԻ. ԵՒ ԶԿԱՄԻՆ, ԵՒ ԶԱՆԴԱՐԻՈՆ, ԵՒ ԿԱՏԱՊԱՆ ՈՎ ԵՒ ԼԻՆԻ ՏԱ ՍԵՐՄ, ՈՒՄՈԴԵԻ ԾԱԽՔ ԶԸՆԾԵԼՈՅՆ, ԶԱՅԼՆ ՏԱՆՈՒՏԷՐՔՆ ԱՌՆԵՆ ԻԻՐԵԱՆՑ ՏԱՄԲ ՈՐ ԶՀԱՍՆԻ Ի ՅԱՆԻ ՈՉԻՆՉ ՈՅԺ, ԵՒ ԳԻՆԵԻՈՐ ԱՆԵՑԻ ԵԹԷ ՍԱՅԼՈՎ ԵԹԷ ԳՐԱՍՏՈՎ ԲԱԺՆ ԱԶԱՏ Է, ԵՎ ԱՆԵՑԻ ՈՐ ԻԻՐԵՆՆ ՄՈՐԹԵԼԻՔ ԳՆԷ, ԲԱԺՆ ԱԶԱՏ Է, ԵՒ ՇԱԼԱԿԱԽՈՐ ԱՆԵՑԻ ԲԱՄԲԵՆՑԱՎ ԲԱԺԻՆ ԿԷՍՆ ԱԶԱՏ Է, ԵՒ Ի ԿԱՊԵՐՆ ՏԱԻՆ ԴԱՀԵԿԱՆԻՆ, Զ, ԴՐԱՄ, ԱՅՍ ՏԱՆ, ԴԻՔ, ԱԶԱՏ Է, ԵՒ ՄՍԱԳՈՐԾԻ ԵԹԷ ՊԱԽՐԷԻ ԼԻՆԻ ԳԼՈՒԽ, ԵԹԷ ՈՉ-ԽԱՐԻ ԿԷՍՆ ՏԱ, ԿԷՍՆ ԱԶԱՏ Է, ԵՒ Ի ՆՍՏՈ ԻՆԿԱՐԼԷՆ Ո ԴՐԱՄՆ ԱԶԱՏ Է, Այս արտոնագիրը, ինչպես և Մայր տաճարի նույն պատին նման տառաձևերով փորագրված Ահարոն մագիստրոսի արձանագրությունը, միանգամայն անաղարտ է պահպանվել և նրա ընդօրինակությունը բոլոր ուսումնասիրողների մոտ է, աննշան տարբերություններով, նույնական է իրականի հետ, ստուգվում է լուսանկարով, ըստ այգմ զգալի տարբերություններ չի տալիս: Չնայած գրան, այս կարևոր բնագրի վերծանության և մեկնաբանության առկա վիճակը դժվար է գոհացուցիչ համարել, քանի որ նրանում հիշատակված մի շարք տերմիններ, հասկացություններ կամ պարզապես անստույգ տառաշարքեր մինչև օրս էլ չարունակում են մնալ անբացատրելի կամ վիճելի, չնայած տառաձևերի ընթերցումների հավաստիությանը և հետազոտողների ջանքերին: Բաղրատ մագիստրոսի վիճագիրը մեր բազմահազար արձանագրությունների թվում այն եզակիներից է, որ արժանացել է գիտական ստուգելի ընդօրինակության ու ըստ ամենայնի հանգամանալի վերլուծության, և, այսուհանդերձ, բնագրի ավելի ուշագիր քննությունը նոր մեկնությունների և ըմբռնումների հնարավորություններ է բացում այնտեղ, որտեղ առկա բացատրությունները թվում էին միանգամայն անառարկելի ու սպառնիչ:

Այս տեսակետից չի կարելի արդարացի չհամարել Վ. Բենեշևիչի այն համոզումը, որ «Բաղրատի արձանագրությունը Հին Հայաստանի իրավունքի և տնտեսության պատմաբանների համար երկար ժամանակ ծառայելու է ոչ թե իբրև լույսի աղբյուր՝ անհայտ երևույթները լուսաբանելու համար, այլ իբրև բնախույզ ուսումնասիրության առարկա, որ խոստանում է առատ արդյունքներով հատուցել թափված աշխատանքը...»⁵:

Վերջերս քննվող արձանագրության մեջ հիշատակված առնուտերութիւն բառի ստուգաբանությամբ և ամբողջ բնագրի մեկնությամբ ընդարձակ հոդվածով հանդես եկավ նաև պատմաբան, բյուզանդագետ Հր. Բարթիկյանը: Այստեղ հեղինակը բյուզանդական աղբյուրների և Անիի մյուս արձանագրությունների վերլուծությամբ աշխատում է ցույց տալ, որ բնագրի առին գտանուտերութիւն կապակցությունը նախորդ ուսումնասիրողների կողմից ստույգ չի բացատրվել՝ առանձնեցիկ տանուտերութիւն («получили таиутерство приняли управление городом»), քանի որ, նրա կարծիքով, տանուտերութիւն բառը տվյալ իրադրության մեջ պետք է դիտել ոչ թե իբրև բառաբար-

⁵ Բնագրի անհասկանալի տառաշարքերից նշելի են 7-րդ տողում. եւ շաւակաւուր անեցի բամբէնցավ բաժին կէսն ազատ է..., վերջին տողում. եւ ի սստո ինկարլէն: Ո: դրամն ազատ է: Սրանցից բամբէնցավ տառաշարքը մի քանի ընդօրինակողներ (Դևորդյանց, Բասմաչյան) են- Բաղրատար վերականգնել են ամէն զաղ (բաժին կէսն ազատ է), որ ավելի հավանական է թվում:

⁶ В. Бенешевич. նշվ. աշխ., էջ 24:

դուք յայտնաբերուած տունը և տէրութիւնը բաղադրողներէն (տանուտրութիւն > տանուտրութիւն), ինչպէս կարող է թվալ առաջին հայացքից և հասկացվել է մինչ այդ, այլ այնպիսի բարդութիւն, որ բաղադրվում է տուն և տրութիւն բառերից, ըստ որում վերջինս ծագում է տալ բայի աուր(ք) արմատաձևից և ուրիշ ածանցից, իսկ ամբողջ բարդութիւնը նշանակում է՝ տան տրութիւն, տան տուրք, այսինքն՝ տնահարկ: Տանուտրութիւն բառի այսպիսի ստուգաբանութիւնից հնդինական այն եզրակացութեանն է հանդում, թե Բագրատ Վիկացորենվող արտոնագրում բառը արտահայտում է ոչ թե Անի քաղաքի կառավարման վարչական մարմնի՝ տանուտրութեան նշանակութիւնը, այլ տների աւտակաւն հարկի՝ տանուտրութեան իմաստ, որն, այսպիսով, իր բովանդակութեամբ նույնանում է Ահարոն մագիստրոսի արձանագրութեամբ ընդամենը 4 տարի դրանից առաջ (1055—1056 թթ.) վերացված պախտ տանգ-ի կամ տնահարկի, այսինքն՝ բյուզանդական էնիկիոն-ի հետ⁷: Տանուտրութիւն բառի այսպիսի ստուգաբանութեամբ հնդինակաւ ստիպված է եղել տարբեր իմաստներ տեսնել այս տերմինի և բնագրի շարունակութեան մեջ հիշատակված տանուտէրք բառերի մեջ որի հետեւանքով կատեպան Բագրատի ամբողջ արձանագրութեան բովանդակութիւնը ներկայացվել է նախորդ մեկնաբանութեանն համեմատ իրականից ակնհայտորեն ավելի հեռացած և աղավաղված:

Հարկ է նշել, որ Հր. Բարթիկյանի այս մեկնաբանութիւնը չի բխում կատեպան Բագրատի արձանագրութեան ինչ-որ նոր, մինչ այդ անծանոթ և ավելի սպառիչ վերծանութիւնից կամ աւանդութիւնը բառի ակներե ու համոզիչ ստուգաբանութիւնից, այլ ավելի շուտ հիմնված է այն կանխակաւ համոզման վրա, ըստ որի, Բագրատ Վիկացին Բյուզանդիայի արեւելյան թեմի կառավարիչ նշանակվելուց առաջ կայսրին խոստացել էր ավելի լաւ բավարարել Անիի և մերձակայքի պահանջը, ինչպէս նաև զորքի կարիքները հոգալ զուտ տնդական միջոցների հաշվին, առանց կենտրոնական գանձարանի օգնութեանը: Դիմելու Բյուզանդական աղբյուրների այս տվյալներից դատելով, պետք է ուսպասել, որ կատեպան Բագրատը, անցնելով Անիի կառավարման գլուխ, կսկսեր ամեն ինչ անել խոստացած տնդական միջոցներն ավելացնելու ուղիով: Բայց նպատակով թերևս վերականգնել դրանից շորս տարի առաջ Թեոդորա կայսրուհու «գիր ազատութեամբ» վերացված պախտ տանգ, քաւտակ, ինչպէս նաև զիւտ հարկերը, որոնք Բյուզանդիայի պետական եկամուտների զգալի մասն էին կազմում, գուցե և այլ՝ լրացուցիչ հարկեր և տուրքեր սահմանելով բնակչութեանից գանձելու համար:

Կատեպան Բագրատի՝ Անիում թողած այս միակ արձանագրութեանից այդպիսի քայլեր է ակնկալում և Հր. Բարթիկյանը, մանավանդ որ, թե՛ բյուզանդական, և թե՛ հայկական աղբյուրները անսրող հակակրանքով են արտահայտվում Բագրատ Վիկացու այդ տարիների գործունեութեան մասին՝ նրան համարելով Անիի կործանման հիմնական պատճառներից մեկը: Սակայն այլ են մատնագրական վկայութեանները Բագրատի մասին և այլ՝ իրական:

⁷ Р. Бартикян, «Эникион» в Византии и столице арм. Багратидов Ани в эпоху византийского владычества (1045—1064 гг.), «Պատմա-բանասիրական հանդես» (ՊԲՀ), 1968, № 2, էջ 126: Հոդվածի ֆրանսերեն թարգմանութիւնը վերջերս լույս տեսաւ Փարիզի «Revue des études Arméniennes» հանդեսի 1969 թ. VI հատորում, էջ 283—299:

վավերագիրը՝ կատեպանի անեղծ արձանագրությունը, որ պետք է ընթերցել և վերծանել այնպես, ինչպես հասել է մեզ: Իսկ այդպես կարգավորվող բնագիրը, պարելի է համոզվել, որ նրանում ոչինչ չի ասված անեցիների հարկերը կամ պարհակները ինչ-որ չափով ավելացնելու կամ տեղական միջոցները ավելի մեծ քանակով հավաքելու մասին: Ծիշտ հակառակը, այստեղ ևս, ինչպես և մագիստրոս Ահարոնի արձանագրության մեջ, խոսքը միայն քաղաքի բնակիչների հարկերն ու պարհակները կրճատելու կամ իսպառ վերացնելու մասին է: Հր. Բարթիկյանը իր հոգևածում մեջ է բերում Բագրատի արտոնագրի միայն առաջին մասը, որտեղ հիշվում է վեցկիլի, սալլի, կամի կոռերից և անգարիոն պարհակից անեցիներին ազատելու մասին: Արտոնագրի շարունակության մեջ, բացի դրանից, սահմանվում է նաև, որ բաժ հարկից լիովին ազատվում են՝ զինետու անեցին (զինեվաճառ) և իրեն մորթելի գնու անեցին, բաժի կեսից ազատվում են՝ շալակաուր անեցին և մսագործ անեցին, մի կապիճի բաժը 5 դրամից իջեցվում է 4-ի և այլն: Նույնիսկ բնագրի վերջին նախադասությունը, որ մինչև օրս բոլոր հետազոտողների մոտ անվերծանելի տառաշարք է մնացել (...ե ի նստին կարլէն. կամ ե ի նստ ինկարլէն), նույնպես հաղորդում է բնակիչներին ինչ-որ հարկից ինչ-որ չափով ազատելու մասին (...ն: դրամն ազաւ է): Սակայն այս թվարկումով չեն վերջանում անեցիներին շնորհված արտոնությունները. պարզվում է, որ դրանից բացի, կատապան, ով եւ լիֆի պարտավոր է Անիի բյուզանդական վարչության և զորակազմի մատակարարման նպատակով անեցիների կատարած ցանքսերի համար տրամադրել 600 մոգ սերմացու, ինչպես և հատուցել արտերը հնձելու ծախսերը (...ծախի գրն-ծելուն). որպեսզի միայն մնացած աշխատանքները կատարեն Անիի տանուտէրէն իւրեանց տամբ, և այսպիսով քաղաքին նեղություն, դժվարություն, չհասնի (...որ չհասնի ի յԱնի ոչինչ ոյժ...):⁸

Կատեպանների համար սահմանվող այս պարտավորությունը կարող է տարակույս առաջացնել և անհավանական թվալ. արդարև, ինչպե՞ս կարող է կատեպան Բագրատը. միանձնյա կարգով, իրեն հաջորդող կատեպանների համար էլ որոշել սերմացու տրամադրելու և հնձելու ծախսերը հոգալու պարտավորություն: Բնագրի այս սահմանումն այնքան անհավանական է թվացել ուսումնասիրողների համար, որ նրանցից ոմանք հակված են եղել տարբեր իմաստներ տեսնել նույն այս արձանագրության մեջ հիշատակված երկու կատեպանների մեջ՝ «Բագրատա մագիստրոսիս եւ արեւելից կատապանիս...», և կատապան ով եւ լիֆի, տա սերմ մի մոգ...»։ Վ. Բենեշեւիչը, օրինակ, հնարավոր է համարում երկրորդ կատապան-ի մեջ տեսնել ոչ թե բյուզանդական պաշտոնյա, բեմի կառավարիչ, այլ պարս. kedban բառը, նախապես՝ տան, գյուղի պահապան, հետնաբար նաև՝ այգիների պահապան, այգեպան նշանակությամբ, որ կատկպան, կատապան գրությամբ և վերջին իմաստով հիշատակված է Հավուց թառի և Վաղուհասի (Արցախ) արձանագրություններում. «Ես՝ Գրիգոր կատկպանն էտու իսո ղհ ի սր ուխտս և սպասաւորքս գրէցին. Բ. Ժամ, ետու զիմ արկած այգին ի ճաբի իր կատապանովն»⁹: Մեզ հավանական է

⁸ Տե՛ս Հ. Օրբելի, Դիվան, էջ 37: В. Бенешевич, նշվ. աշխ., էջ 22—23:

⁹ Տե՛ս В. Бенешевич, նշվ. աշխ., էջ 27: Գ. Հովսեփյան, Հավուց թառի Ամենափրկիչը և նույնանուն հուշարձաններ հայ արվեստի մեջ, Նրուսադեմ, 1937, էջ 17: Վաղուհասի վկայությունը առնում ենք Ս. Բարխուդարյանի «Արցախի արձանագրությունները» անտիպ ժողովածուից: Կատապան ձևը առաջանում է կատեպան, կատկպան-ից եզրային

թվում մտածել, որ կատեպան Բագրատը տվյալ դեպքում այս արտոնագիրը կամ համենայնդեպս նրա այն մասը, որ վերաբերում է կատեպանների պատ- տավորություններին, հրապարակում է ոչ թե իր անունից, այլ Բյուզանդիայի կայսեր՝ «սուրբ եւ ինֆնակալ քաղաուր» Կոստանդին Դուկի ողորմութեամբ կամ նրա բարեհաճությամբ: Ըհշտ է, այստեղ որոշակի չի նշված, որ հիշյալ արտոնությունները տրվում են կայսեր անունից կամ նրա «գիր աղատու- թյամբ», ինչպես այդ տեսնում ենք մագիստրոս Ահարոնի արձանագրության մեջ (րեբի ոսկի մսուռանաւ զիր ազատութեան...), սակայն արտոնագրի ամ- բողջ տոնից և շարադրանքից երևում է, որ նոր կատեպան դաբձած Բագրատը այդ բարեփոխությունները կատարում է կայսեր կամ արքունիքի իմացու- թյամբ, եթե ոչ նրանց անունից: Արձանագրության հիմնական մասը, որտեղ հիշատակվում են անեցիներին շնորհված արտոնությունները և կատեպաններէ պարտավորությունները, շարադրված է անորոշ ձևով, որից չի հասկացվում, թե ո՞վ է տալիս այդ շնորհները կամ ո՞վ է բնագրի հեղինակը: Նախադասու- թյան առաջին մասի արտաքին կառուցվածքից կարելի է մակաբերել, թե նրա հեղինակը բյուզանդական երեք պաշտոնյաներն են՝ Մխիթար իպատոսը, Գրի- գոր և Սարգիս սպաթար-կանդիդատները, որոնք, հերավի, չլուծամ առին զուանուտութիւնս... եւ ազատեցին զվեցկէ կոռ եւ զսայի եւ զկամին եւ զան- գսրիոն...», բայց միայն այսքանը, շարունակության մեջ թվարկված արտո- նությունները և մանավանդ կատեպանների պարտավորությունների սահմա- նումը հազիվ թե հնարավոր լինի վերագրել հիշյալ պաշտոնյաներին, որոնք, անտարակույս, անկախ իրենց պաշտոնի բնույթից, բոլոր դեպքերում սոսն ստորադասվում են կատեպան Բագրատին: Հր. Բարթիկյանը անվերապահորէն պնդում է, թե այդ դինվորականները բյուզանդական հարկահաններ են (հմմտ. մոնղոլական շրջանի տալմաշի, ձեռնաւոր, շահնա պաշտոնները), որոնցից յուրաքանչյուրը հավաքում էր Անիի պատմականորեն գոյացած երեք շրջաննե- րից կամ թաղամասերից մեկի հարկերը: Եվ որովհետեւ Հր. Բարթիկյանը մա- գիստրոս Ահարոնի արտոնագրում հարկահանների մասին նման ցուցում չի նկատում, ստիպված է լինում եզրակացնել, թե այդ ժամանակ հարկահավաք- ների ինստիտուտը չկար, և հարկերը մուծվում էին անմիջականորեն պետու- թյանը և միայն՝ դրանից ընդամենը 4 տարի անց, Բագրատի արձանագրու- թյան մեջ արգեն նույն հարկերը մուծվում էին միջնորդաբար՝ հարկահան պաշ- տոնյաների միջոցով¹⁰: Այստեղից, ըստ հեղինակի, ստացվում է, որ շորս տալ-

ա-երի առնմանությամբ: Բառիս միակ ստուգաբանությունը տալիս է Հ. Հյուբշմանը՝ Arme- nische grammatik, Leipzig, 1897, էջ 355: Ըստ այդմ, կառուցված ժողովում է հուն. καταπαγε — բաղաբառակա, զխալիս արմատից, որն իր հերթին փոխառված է լատ. Catipaneus — զխալիս ձևից: ԺԳ դարի հիշյալ վիճաբերում և արդի մի բանի բարբառներում կառուցված ստա- ցել է ալգեպան, այդու պակասով նշանակություն (Տ. Նավասարդյան, Հայ ժողովրդա- կան հեքիաթներ, Թիֆլիս, 1889, էջ 109: «Բառգիրք Արարատյան բարբառի», Տփղիս, 1903, էջ 58): Առկա տվյալներով դժվար է որոշել, թե ինչպես է առաջանում այս իմաստային անցումը: Բենեշկիչի փորձերը կառուցված-այգեպան համարելու պարս. ked-տուն, գյուղ և եձո-պահոդ տրամադրից կազմված բարդությունն՝ kedbân (հմմտ. kedivar, kedşuda) — գյուղապետ, նաև այգեպան նշանակությամբ համոզիչ արդյունքների չեն հասցնում և առայժմ կառու- պան-այգեպան մնում է կարոտ նոր քննությունների (տես նաև. H. V a r r, Физнолог. СИБ, 1904, էջ 76):

¹⁰ P. Б а р т и к я н, նշվ. աշխ., էջ 127:

վա ընթացքում՝ 1056—1060 թթ., այսինքն՝ Ահարոնի վիճագրից մինչև Բագրատինը, Բյուզանդիայի պետական հարկահավաքման կարգի մեջ տեղի են ունեցել հետևյալ փոփոխությունները՝ Ա. Անիում տների պետական հարկը՝ պախա աանց-ը կամ բյուզանդական էնիկիոնը, վերանվանվել է տանուտուրիւն: Բ. Առաջացել է հարկահանների ինստիտուտը, որ առաջ չկար, քանի որ հարկերը անմիջականորեն, առանց միջնորդ պաշտոնյաների, մուծվում էին պետական գանձարանը: Հեղինակը չի անդրադառնում տեղի ունեցած փոփոխությունների պատճառարանությանը և նրանց առաջացումը մեզ թվում է չհիմնավորված և բիշ հավանական: Նախ, Անիում բյուզանդական հարկահավաք պաշտոնյաների մասին. Հր. Բարթիկյանը Ահարոնի արձանագրության այն հատվածից, որով հաղորդվում է Միւրանեծին քաղուհու կողմից ամենամյա ութ լիտր տնեւի պախուն ու քաստակլւ վերացնելու մասին, այն եզրակացությունն է հանգում, թե արտոնագիրը փորագրելու ժամանակ Անիում բյուզանդական հարկահաններ չկային և այդ պատճառով քաղաքը պետական հարկի սահմանված գումարը վճարում էր անմիջականորեն արքունական գանձարանին: Մեզ թվում է, Ահարոնի արձանագրությունը այս հետևության համար որոշակի հիմքեր չի տալիս և նրանում քաղաքի բնակչության վճարելիք հարկերի տարեկան գումարի սոսկ ցուցումը (չափ ութից լտեւց) շատ հեղհեղուկ կոչվան է նման եզրակացության համար:

Չէ որ բաղմամբիվ այլ օրինակներից հայտնի է, որ նախապես որոշվում էր տվյալ քաղաքի կամ թեմի վճարելիք պետական հարկերի գումարը, անկախ այն պարագայից, թե ինչպես են գանձվում դրանք՝ հարկահանների միջոցով. թե անմիջականորեն: Մյուս կողմից, Ահարոնի արձանագրության մեջ հենց որոշ ակնարկներ կան Անիում հարկահավաքի կամ քաղաքի վարչության այլ պաշտոնյաների գոյության մասին, դրանք են՝ ի ինդրո իշխանաւորացս կապակցութիւնը, որին ընդառաջելով խափանվում է զգիւտ երկուց լտեւց հարկի գանձումը, ինչպես նաև մութասիբ-ի հիշատակությունը, որ երկու դեպքում էլ հիշյալ պաշտոնյաներին են մատնանշում:

Տանուտուրիւն-ը բյուզանդական տիրապետության շրջանում Անիի քաղաքային վարչության մարմին համարելը Հր. Բարթիկյանը առարկելի է համարում երկու պատճառով. Ա. Ժամանակաշրջանի աղբյուրներում ցուցումներ չկան տանուտուրիւն ինստիտուտի՝ իբրև միջնադարյան քաղաքների կառավարման մարմնի, առավել ևս նույն Անիում այդպիսի մի քանի մարմինների (առին զտանուտուրիւնս) գոյության մասին: Բ. Զտանուտուրիւն բառի տառաձևերի հնագրական բնութագիրը և նրա ձևաբանական, բառակազմական կերպարը չեն համապատասխանում առաջարկվող ստուգաբանությանը կամ նրա կազմությանը տուն և տէրութիւն > տութիւն բաղադրիչներից: Այսպես ստուգաբանելու դեպքում հեղինակը անբացատրելի է համարում հապավման նշանի (պատիվ) բացակայությունը տանուտուրիւն բառի տը (<տէր) հապավման վրա (բանավոր), ինչպես և առին զտանուտուրիւնս կապակցությունը, որ անհարիր է գտնում ժամանակաշրջանի պատմական իրադրությունը, քանի որ այդ դեպքում ստացվում է, որ Անիում կային մի քանի տանուտուրիւններ (զտանուտուրիւնս — հոգնակի, հայցական), որոնք «ցանկացողը կարող էր ստանալ կամ վերցնել իր վրա» (առին զտանուտուրիւնս)¹¹:

¹¹ Նույն տեղում, էջ 125—126:

Արդարև, տանտուրուքին տերմինը, իբրև միջնադարյան բաղադրյալ վարչակառավարչական մարմին, չի հանդիպում ժամանակի մատենագրական աղբյուրներում, և այդ ինստիտուտի գոյությունը Անիում, համենայն դեպս բյուզանդական տիրապետության 20-ամյակում (1045—1064 թթ.), չի կարելի անվերապահորեն հաստատված համարել։ Սակայն պատմագրությանը շատ րիչ բան է հայտնի Անիի և ընդհանրապես միջնադարյան բաղադրյալ վարչակառավարչական կազմակերպությունների և ինքնավարության մասին։ Անիի վիմական արձանագրություններում բանիցս հիշատակված բաղադրի իրիցանին (— եղ. երեց), որ ն. Մաուր և Հ. Օրբելին հակված էին բաղադրի վարչական մարմին համարելու¹², վերաբերում է սոսկ մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանին [վկայված՝ ՉԺԸ (1269 թ.), ՉԻԹ (1280 թ.), ՉԼԸ (1289 թ.) բնագրերում¹³] և, ինչպես պարզվել է նորագույն ուսումնասիրություններից, չի արտահայտում բաղադրի «ավագների խորհրդի» կամ «ծերք ֆադաֆին» իմաստը, ինչպես կարծվում էր, ուստի և ոչ մի չափով չի ընդլայնում մեր պատկերացումները Անիի կառավարման մարմինների մասին¹⁴։ Բայց որ Անիի նման խոշոր մի բաղադրում բացի բյուզանդական կատեպանից (որի դեպ ոչ միայն բաղադրի, այլև Արևելքի կատեպան էր, այսինքն՝ քեմի, մարզի, կատեպանության կառավարիչը կամ կուսակալը) գոյություն են ունեցել նրան ստորադասված վարչական տեղական այլ մարմիններ ևս, մեզ թվում է ամեն կասկածից վեր։ Հենց Անիի այս վարչական մարմինները շե՛ն ակնարկում, արդյոք, մագիստրոս Ահարոնի արձանագրության ի խնդրո իշխանաւորացս բառերը, որ ի տարբերություն Բենեշեկչիի, Հ. Բարթիկյանը իրավամբ թարգմանում է ոչ թե подвластный («а так-же по просьбе подвластных»), այլ властелин, вельможа («по просьбе вельмож»)։ Հարց է առաջանում, այդ ի՞նչ իշխանավորներ էին Անիում, որոնց միջնորդությամբ Ահարոն մագիստրոսը խափանում է զգիւտ (հարկը)՝ երկուց լտերց չափով։ Ստույգ դժվար է ասել, թե ինչ է հասկացվել իշխանաւորաց բառի տակ, բայց որ խոսքը Անիի կառավարող կամ հարկահավաք պաշտոնյաներին է վերաբերում, դժվար է կասկածել։ Մյուս կողմից, հենց Հր. Բարթիկյանը, վկայակոչելով Հ. Օրբելու «Անիի Ուղեցույցը», գտնում է, որ Անին պատմականորեն երեք շրջանի կամ թաղամասի էր բաժանված և որ կատեպան Բագրատի արձանագրության մեջ հիշատակված երեք զինվորականներից յուրաքանչյուրը պարտավորություն ուներ գանձելու այդ շրջաններից մեկի հարկերը¹⁵։ Այսպիսով, առին զաւանուտութիւնս կապակցությունը Հր. Բարթիկյանին հիմք է տվել բյուզանդական հիշյալ զինվորականներին հարկահավաք պաշտոնյաներ համարել, մինչդեռ ավելի հետևողական լինելու դեպքում կարելի էր կռահել, որ այդ անվան տակ հասկացվել են Անի բաղադրի ներքե թաղամասերի վարչական մարմինները, որոնք ստորադասվում էին բաղադրի և թեմի գերագույն կառավարչին՝ կատեպանին։ Հր. Բարթիկյանի մեկնությունից չի հասկացվում, թե ինչու Անիի երեք թաղամասերը կամ պատմականորեն առաջացած շրջանները կարող էին ունենալ երեք հարկավաճներ։

¹² Н. Марр, Ани, М.—Л., 1934, էջ 127; Հ. Օրբելի, Դիվան, պր. 1, էջ 111:

¹³ Հ. Օրբելի, Դիվան, պր. 1, էջ 22, 23, 24:

¹⁴ Տե՛ս Բ. Առաքելյան, Բաղադրային վարչությունը և ինքնավարությունը միջնադարյան Հայաստանում, ՊԲՀ, 1961, № 3—4, էջ 58—60:

¹⁵ В. Бенешевич, узд. азбу., էջ 4; Р. Бартикаян, узд. азбу., էջ 121:

բայց ոչ նույնքան վարչական մարմիններ կամ կառավարիչներ, իշխանավորներ: Տանտուրուքին բարդության տուն > տան + տէրութիւն = տանտուրուքին ասուգարանութիւնը մերժելով, Բարթիկյանն ստիպված է եղել այլ կերպ բացատրել նույն արձանագրության շարունակության մեջ հիշատակված տանտուտէրֆն բառը, որը կիրառված է այս կապակցության մեջ. եւ կատապան ով եւ ինի, տա սերմ : Ու մոդ եւ ծախֆ զընծելոյն, գալլն տանտուտէրֆն առնեն իւեանց տամբ, որ չհասնի ի յԱնի ոչինչ ոյժ...¹⁶: Վ. Բենեշեւիչի մոտ այս հատվածը թարգմանված է. «И катепан, кто бы ни был, пусть даст семян 600 модов и расходы на посев, остальные танутеры пусть производят своим домом, чтобы не случилось с Ани никакой обиды»¹⁷: Այստեղ, տանտուտէրքն Հր. Բարթիկյանը հասկանում է домовладелец = տնտեր, այս բառի անիական իմաստով՝ կուղպակի կամ արհեստանոցի տեր, այսինքն տուն անվերապահորեն ընկալում է ոչ թե ավանգական՝ ծուխ, երգ, ազգաւոր, գերդաստան, այլ միայն՝ շենֆ, կառուցվածք, սենյակ, այս դեպքում՝ կուղպակ, արհեստանոց, տակաոֆի և այլն, և այս ամենն այն նպատակով, որպեսզի արդարանա տանտուրուքին < տան + տուր(f)ութիւն, կրպակի կամ արհեստանոցի հարկ բացատրությունը¹⁸:

Մինչդեռ վերը բերված հատվածի անկանխակալ վերլուծությունից կարելի է կռահել, որ այստեղ խոսքը տնտերների, կրպակի կամ արհեստանոցի տերերի մասին չէ, այլ կատապանին ստորադասված հենց այն երեք տանտուրուքյանների մասին, որոնց գլուխ են կանգնել Մխիթար իպատոսն ու Սարգիս և Գրիգոր սպաթարկանդիդատները: Հր. Բարթիկյանը չի տալիս արձանագրության այս երկրորդ մասի վերլուծությունը, որը ըստ էության հակասում է նրա մեկնությանը, և այդ պատճառով չի իմացվում. թե ինչպես է հասկանում, այդ հատվածը կամ Բենեշեւիչի թարգմանությունը: Մեզ թվում է, թե այդ թարգմանությունը, մեր նշած մի քանի աննշան անճշտություններով հանդերձ, միանգամայն նույնական է բնագրի հետ, ըստ այդմ, բնագրի այդ մասի վերլուծությունից պետք է հասկանալ հետևյալը. Անիի բյուզանդական կատապան Բադրատ Վիկաջու կաթագործությանը քաղաքի նրան ստորադասված երեք տնտերները անեցիներին աղատում են վեցկիի (= գութան, արոր), սալլի, կամի կոսերից և անվարիոն կոչված փոստա-սուրհանդակային պարհակի պարտավորությունից: Ինքնին հասկանալի է, որ հիշյալ պարտույթները անեցիները պետք է կատարեն արբունի հողատարածությունների վրա՝ բյուզանդական արեւելյան թեմի վարչական անձնակազմը և դորքը պարենամթերքով ապահովելու և մյուս կարիքները հոգալու համար: Սակայն Բադրատի արտոնագրում բյուզանդական պետական պարհակները իսպառ չեն վերացվում: Շարունակության մեջ նշվում է, որ կատապանները պարտավորվում են բանակի

¹⁶ Հ. Օրբելի, 'Իվան, պր. 1, էջ 37:

¹⁷ В. Бенешевич, նշվ. աշխ., էջ 23. զընծելոյն բառը ստույգ չի թարգմանված, բնագրում դարձ փոքրգրված ծախֆ զընծելոյն հարկ էր թարգմանել расходы на косбѹ нѣнѣлю, ծախսեր: Տվյալ կապակցությունը Կ. Բասմադյանը հասկացել է ծախֆ բնծալելոյն (= բնծա, բնծալել), որ ավելի է հեռու իրականից (տե՛ս К. Басмаджян, նշվ. աշխ., էջ 23):

¹⁸ Р. Бартикян, նշվ. աշխ., էջ 125—126:

և վարչակազմի մատակարարման նպատակով կատարվող ցանքսերի համար սուրամագրի 600 մոդ սերմացու և հատուցել արտերը հնձելու ծախսերը, մնացած աշխատանքները (զալլն) միայն թողնելով, որպեսզի կոռային կարգով կատարեն Անիի տանուտէրին իւրեանց տամբ:

Հր. Բարթիկյանի մեկնաբանությունը՝ տանուտրութիւն = տան տուրբ, տնահարկ, տանուտէր = տան, կրպակի, արհեստանոցի տեր, ոչ մի շարժով չի համապատասխանում ամբողջ արձանագրության և հատկապես նրա երկրորդ մասի բովանդակությանը (տանուտէրին իւրեանց տամբ) և այսպիսով բնագիրը պարձնում է անբացատրելի ու ավելի առեղծվածային:

Անիում բնակիչների և ավագանու նկատմամբ բյուզանդական վարչակազմի դիջողական և սիրաշահիլու քաղաքականությունը քսանամյա տիրապետության ժամանակաշրջանում հանրահայտ իրողություն է և դիտված միշտ ուսումնասիրողների կողմից: Այդ է հավաստում հենց Հր. Բարթիկյանը Ահարոն մագիստրոսի արձանագրության մասին դրած իր հոդվածում. «Բյուզանդիան, որ տիրացել էր Անիին ոչ թե անեցիների ցանկությամբ, այլ դենք՝ ու նենգության միջոցով, պարզ է, որ պետք է աշխատեր սիրաշահել մի կողմից քաղաքի բնակիչներին և մյուս կողմից՝ նրա իշխանավորներին, քաղաքի ավագանուն»¹⁹: Հեղինակն իրավամբ Բյուզանդիայի այս սիրաշահիլու քաղաքականության արտահայտությունն է համարում մագիստրոս Ահարոնի արտոնագրի մեջ հիշատակված ինչպես քաղաքի ամրացման, բարեկարգման, ջրամատակարարման ուղղությամբ կատարված միջոցառումները, այնպես էլ բնակչությանը պալստ տանց, քաստակ, գյուտ հարկերից ազատելը:

Հարկերի ու պարհակների դիջման կամ թեթևացման նույն քաղաքականությունը տվելի լայն չափերով, հավանաբար, շարունակվել է նաև հետագայում և, ինչպես տեսանք, արձանագրված է կատեպան Բագրատի արձանագրության մեջ և այդ պատճառով անհամոզիչ է թվում հեղինակի վարկածն այն մասին, թե Բագրատի օրոք Բյուզանդիայի Անիում վարած քաղաքականության մեջ շրջադարձ է կատարվել դեպի հարկերի ավելացում և ավելի անդիջում վերաբերմունք անեցիների նկատմամբ: Համենայն դեպս, Բագրատի բնավող արձանագրությունը, ինչպես տեսանք, այդպիսի հետևության համար որևէ հիմք չի տալիս:

Այսպիսով, մեզ թվում է, որ բնավող հատվածում ընդհանուր գծերով հարևում է Անիի վարչա-կառավարման սանդղակը երկու աստիճաններով՝ կատեպան և տանուտեր, որոնց ենթարկված են քաղաքի բնակչության առանձին տները, երկերը կամ գերդաստանները, լինեն դռանք արհեստավորներ, վաճառականներ, թե երիցանի կամ երկրագործներ: Մյուս կողմից, մեր օրինակում տանուտէր(ին)ն չի կարող նշանակել տնատեր, կրպակի կամ արհեստանոցի տեր նաև այն պատճառով, որ վկայված իրադրության մեջ կատեպանների պարտավորությունները սահմանվում են ոչ թե քաղաքի բնակչության այդ խավի համար (արհեստավորներ, առևտրականներ), այլ միայն և միայն քաղաքի կամ քաղաքամերձ այն բնակիչների օգտին, որոնց հիմնական զբաղ-

¹⁹ Հր. Բարթիկյան, Ահարոն մագիստրոսի արձանագրության (1055—1056) մեջ հիշատակված հարկերի մասին, ՊՁ, 1959, № 4, էջ 172:

մունքը երկրագործությունն էր, Անին և բյուզանդական անձնակազմը հացահատիկով և ալ մթերքներով բավարարելը:

Բացի դրանից, կռոնրի վերացումը ևս հիմնականում վերաբերում էր ոչ թե Անիի արհեստավորներին կամ վաճառականներին, այլ միայն հողագործ բնակչությանը, քանի որ վերացվում էին վեցկիի (նախագուրան, առու)²⁰, սալի, կամի կոռերը և անցաւիոն պարհակը, որը նույնպես մարդու և անասունի հարկադիր աշխատանք էր բյուզանդական սուրհանդակային կամ փոստային ծառայության մեջ²¹:

Որ տանուտուրլուկն ստանձնած բյուզանդական զինվորականները քաղաքի կառավարման պաշտոնյաներ են և ոչ թե հարկահաններ, կարելի է հաստատել մի կողմնակի դիտողությամբ ևս. արձանագրության սկզբում յուրմասնունդն զտանուտուրլուկն բառերը և անձնանունները թվարկելուց հետո պարզ փորագրված է. և ազասեցին զվեցկէ կոռ և զսալի և զկամին և զանգաւիոն...: Այս շարադրանքից ստացվում է, որ անեցիներին թվարկված կոռերից (ըստ Բարթիկյանի Բյուզանդիայում՝ ЛНТУРГНЯ) ազատել են հիշյալ երեք պաշտոնյաները, թեև ինչպես նշել ենք, նրանք այդ կարող էին անել միայն կասեպանի կամ բյուզանդական վարչակազմի համաձայնությամբ:

Իսկ հայ վիճագրական հուշարձանների բազմաթիվ այլ օրինակներից հանրահայտ իրողություն է, որ հարկատու բնակչությանը թե՛ Բագրատունիների ժամանակ, թե՛ Բյուզանդիայի տիրապետության տարիներին, և թե՛ հետագա դարերում կռոնրից և պարհակներից կարող էին ազատել միայն հայ թագավորները, բարձրաստիճան կամ տեղական իշխանները, մի խոսքով՝ վաճակաճ պաշտոնյաները և ոչ թե հաւակաճավաճները, որոնք իրավասու էին զիջել կամ նվազեցնել միայն կապալով վերցված հարկերն ու տուրքերը, բայց ոչ թե՛ կոռերը կամ պարհակները. Բերենք երկու օրինակ մեր ասածը հաստատելու համար. հայ վիճագրության մեջ կոռը վերացնելու մասին առաջին արտոնագիրը պատկանում է Գագիկ Ա թագավորին և փորագրված է Մրենի տաճարի պատին. Այս իմ հրամանն են 'Իսկա շահիագնչանի ազատեալ եմ զՄրեն-

20 Բնագրի պարզ կարգացվող զվեցկէ կոռ կապակցությունը ստույգ չի մեկնարանվել ուսումնասիրողների կողմից: Վ. Բենեշկիշը վեցկէ կոռ թարգմանում է шестой кор, ըստ այսմ, վեցկէ՝ հասկացել է վեցերորդ. որով իմաստը մնացել է անորոշ: Կ. Բասմաջյանը նույն կապակցությունը ֆրանսերեն թարգմանել է six corvées, այսինքն վեցկէ փոխարինել է վեց թվականով և այսպիսով չի հասկացվում, թե ինչ կոռի մասին է խոսքը: Վեցկի նշանակում է զուրան, առու (առաջանում է գրաբարի վեցեակ > վեցեկ > վեցկ + ի թվականից և նախապես նշանակել է վեց եզներով բանեցվող առու. հետագայում՝ ընդհանրապես առու, ըստ այսմ վեցկէ կոռը (=վեցկիի, վեցկու) առուի, զուրանի պարհակն է (տե՛ս В. Бенешевич, նշվ. աշխ., էջ 23; К. Басмаджян, նշվ. աշխ., № 23):

21 Բառիս ստուգաբանությունը Բագրատի արձանագրության այս եզակի հիշատակության հիմամբ տալիս է Հր. Անադյանը (Արմատական բառարան, Ա, էջ 295), ըստ այդմ, այն ծագում է հուն. αἰματόεις — սուրճանդակի պտրտադիր ծառայության իմաստից: Նորագույն հետազոտություններից պարզվում է, որ բառս վկայված է նաև ավելի վաղ, դեռևս Ե դարի դասակարգման տառնագրության մեջ. Կորյունի երկում էլ նվալ յանարույն դիմոսական կապակցության մեջ յանարույն անստույգ բառը վերականգնվում է յանգարիայն (αἰματόεις — պետական սուրհանդակ) և նշանակում է սուրհանդակների կամ փոստային փոխադրամիջոց, որը հետագայում ստացել է պետական սուրհանդակների և անդարիաների ծախսերը հոգալու պարտավորության, պարհակի, անվարձ աշխատանքի իմաստ (տե՛ս Հ. Բերբերյան, Հայկական, «Հանդես ամսօրյա», 1968, № 4—6, էջ 170—172):

նոյ զկողմն, որ ի նախնեանի էր զմարդոյ եւ զեզին...²² Մյուս վկայությունն ալևելի ուշ ժամանակների է, Զաքարյանների տիրապետության շրջանից և հանդիպում է Զադավանքի տաճարի արձանագրություններից մեկում. այստեղ էլ, Զաքարյանների վասալ տեղական մի քանի իշխաններ թողնում են զվանաց կուս՝ զմարդո. եզին, իշո եւ զամենայն ցեղ կողմ²³։ Շատ չեն կոռերը վերացնելու մասին այս կարգի հիշատակությունները վիժադրական հուշարձաններում, սակայն եղածներն էլ վկայում են, որ կոռերի և պարտույթների սահմանում կամ վերացումը կատարվել է օտար կամ տեղական վարչական իշխանությունների կողմից և դուրս է եղել սովորական հարկահանների կամ հարկերի կապալաւունների իրավասությունից։

Մյուս կողմից, հանրահայտ է նաև, որ միջնադարում առանձին անհատներ կապալով վերցնում էին միայն պետական հարկերի ու տուրքերի գանձումը. մեզ հայտնի չէ որեւէ դրական աղբյուր կամ վիժական արձանագրություն, որտեղ հիշատակված լինեն կոռերի կամ պարտույթների կատարման կապալառուական կարգի մասին։ Պետական հարկերի գանձման կապալային եղանակը լայնորեն հայտնի էր Անիում մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանում. Առաքելոց եկեղեցու մի քանի արտոնագրերում հաղորդվում է հարկահավաք պաշտոնյաների՝ տալմաշիների (այլ բնագրերում՝ ձեռնաւորներ, շահնաներ) կողմից զանազան հարկեր զիջելու կամ նվազեցնելու մասին²⁴։ Հր. Բարթիկյանը հավաստում է, որ բյուզանդական աղբյուրների տրված լայնորեն դատելով, հարկահավաքման այդ եղանակը գերծել է նաև Բյուզանդիայում, ուրեմն և Անիում։ Կապալով վերցնելով տվյալ շրջանի բնակչությունից պետական հարկերի հավաքման իրավունքը, կապալառու-հարկահանները, ըստ Բարթիկյանի, բյուզ. պակտիոնարիաները, իրենց ցանկացած քանակով ակներև ուղծացած շահերով էին գանձում հարկերը, ուստի և երբեմն, զանազան նպատակներով, առանց զգալի չափով տուժելու, կարող էին զիջել որոշ հարկեր²⁵։ Սակայն բոլոր այս դեպքերում խոսքը հարկերի կամ տուրքերի մասին է և ոչ թե կոռերի կամ պարհակների, որոնց կապալով տալը աղբյուրներում չի վկայված և ըստ երևույթին անհավանական է։

Այստեղից ակնհիշ է, որ քննվող արձանագրության մեջ վեցկիի, սալի. կասի կոռերից և անգարիոնից (որը նույնպես կոռի մի տեսակ էր) ազատող պաշտոնյաները չէին կարող հարկահաններ լինել, ինչպես կարծում է Հր. Բարթիկյանը, այլ միայն քաղաքի կառավարման վարչական մարմիններ. որոնք իրավասու էին հսկել սահմանված կոռերի կատարմանը կամ վերադաս իշխանությունների կարգադրությամբ, իսպառ վերացնել դրանք։

Այժմ տանուտուրիւն բառը քննենք ձևաբանական, բառակազմական տեսանկյունից։ Բարդության երկրորդ եզրում տուրքիւն բաղադրիչ ունեցող կազմություններ, որոնցում տուրքիւն-ը արտահայտեր ոչ թե տէր>տիրութիւն, այլ տալ>տուր>տուրքիւն արմատների իմաստը վկայված են ոչ միայն Ժ—ԺԴ

22 Ն. Սարգիսյան, Տեղագրությունը..., էջ 197։

23 Հ. Շահխաթունյանց, Ստորագրություն..., Բ, էջ 164։ Ալիշան, Այրարատ, էջ 292։

24 Տե՛ս Հ. Օրբելի. Դիվան, պր. 1, էջ 22, 23, 24, 28, 30։

25 Տե՛ս Բ. Բարտիկյան, նշվ. աշխ., էջ 127։

մատածեց և տէր բառից, ու շաղկապով, այսինքն՝ բառը դիտւում է իբրև բաղճյուսական բարդութիւն²⁶։

Մինչդեռ տանուտէր բառի ավելի հավաստի ստուգարանությունը ցույց է տալիս, որ տանու այստեղ չի կարելի բաղադրված համարել տուն արմատի տան հոլովածեց և ու շաղկապից, ինչպես կարող է թվալ առաջին հայացքից։

Հայտնի է, որ հին հայերենի տուն բառը սերում է հնիւ. dēm, dom, dm—տուն, բնակարան ձևերից, որոնք իրենց հերթին ծագում են հնիւ. dem, demə—շինել, կառուցել արմատից։ Սակայն ցեղակից մի քանի լեզուներում dōm, dm ձևերից բացի ավանդված են նույն արմատի Ս բնով ուղիղ ձևեր— domu-s—տուն, որ մի շարք հնդեվրոպաբանների կարծիքով ներկայացնում է տուն արմատի ավելի հնագույն վիճակը, քան dōm, dm։ Ս բնով domu-s առավել անխառն ներկայանում է հին հնդ. domūnas —տան անդամ, տան հարևան, լիտ. nanudarrys—տան աշխատող և հայ. տանու-ւէր ձևերում։

Որոշ ուսումնասիրողներ նույնիսկ ծագումնաբանական անմիջական կապ են նշմարում հին հնդկների Damūnas աստծու անվան և հայ. տանուտէր հասկացության միջև։ Այստեղից ականեր են, որ հնիւ. damu-s—տանու բաղադրիչը և՛ հին հայերենում, և՛ հետագա շրջաններում, վկայված է միայն²⁹ տանուտէր կազմության մեջ և այլ օրինակներ չունի։ Տուն բառով բաղադրվող հարյուրավոր այլ կազմություններում այդ արմատը հանդես է գալիս կամ իբրև տուն (մեծատուն, վաշկատուն, միջնատուն, զանգակատուն և այլն), կամ տն, տրն՝ առանց հոդակապի կամ ա հոդակապով (տնանկ, տնակից, տնատէր, սնտես, միատնութիւն և այլն), կամ տան, որ առկա է տանիք, տանեստան, քնտանի, տաներես ձևերում։ Այստեղից, ականհայտ է, որ կատեպան բազբաթի արտոնագրում վկայված զտանուտրութիւն չի կարող բաղադրված լինել տուն>տան և տուր(ւ) տրութիւն բառերից և նշանակել տան տրութիւն, տան տուրւ, տնատուրւ, քանի որ այդ դեպքում սպասելի էր օրինաչափ՝ տուն>տն+ա+տրութիւն=տնատրութիւն կամ տն+տրութիւն=տրնտրութիւն և ոչ թե տանու+տրութիւն, որ օրինաչափ է միայն տանուտէր բառի համար և ու ինչ օրինակ չունի։

Սակայն Բագրատի արձանագրության զտանուտրութիւն տառաշարքով տրութիւն փորագրված է առանց հապավման գծիկի, որ պետք էր սպասել տէր տր(ութիւն) գրութեան դեպքում։ Արդյոք այս պարագան չի կարող առարկություն լինել տրութիւն<տէրութիւն վերծանության համար։ Պարզվում է, որ ոչ։

Նույն ժամանակների գրական երկերում և միջին հայերենում քանիցս վկայված տրութիւն (<տէր) ձևը մեծ մասամբ գրադրված է նույնպես առանց հապավման նշանի։ Օրինակ. կիլիկյան գրական հայերենով շարադրված ԺԳ դարի Դատաստանագրում հայրենէտրութիւն (=հայրենիք=կալվածք, սեփականություն+տէրութիւն) բառը բազմիցս վկայված է առանց հապավման նշանի (α...այս հայրենէտրութիւնս ի հարն ի գեհացն ինչվի շորս երեսքն յիշ-

23 Հ. Ա ճ ա ո յ ա ն, Արմատական բառարան, Զ, էջ 974։

29 Տե՛ս J. Pokorny, Indogermanisches etymologisches Wörterbuch, Bern, 1959, էջ 198—199, G. Solta, Die Stellung des Armenischen im Kreise der Indogermanischen Sprachen, Wien, 1900, էջ 209—210։

վել»): Այսպես, առանց հապավման նշանի են դրչադրված նաև գերէտրութիւն (գերի + ա + տէրութիւն). ունէտեր, ունետրութիւն (ունե(ցվսմփ) + տէրութիւն] բարդութիւնները³⁰, Վիմագրական հուշարձաններում ևս, թեև ավելի հաղվադեպ, բայց նկատվում են այդպիսի օրինակներ. այսպես, Անիում Տիգրան Հոնենցի 1215 թ. արձանագրության մեջ հանդիպում են՝ տրանց (տէրանց), տրանց բառերը առանց հապավման գծիկի:

Նորագույնի Ձիէ (1278) թ. մի արտոնագրում ևս նույն բառը փորագրված է առանց հապավման նշանի — «տրանց» մերոց հոշաքին եւ աթաբակ Սադունին»: Իսկ Հայրավանքի ԺԳ դ. մի բնագրում առանց հապավման նշանի է վկայված տանուտրոջ (տանուտիրոջ) բառը³¹: Հիշյալ ձևերում, ինչպես և քննվող տանուտրութիւն բառի մեջ տր (<տէր) գրերի վրա հապավման նշան չդնելը հավանաբար բացատրվում է նրանով, որ այդ բնագրերի հեղինակները տր դիտել են ոչ իբրև տէր բառի հապավում, այլ իբրև նրանում առաջացած հնչյունափոխության արգասիք, որի հետևանքով բառամիջի է հնչյունը նախաշնչոտ դառնալով սղվել է կամ փոխվել ը-ի, որը գրության մեջ չի առտահայտվել (տէր > տր > տր > տրութիւն, տանուտէր > տանուտրութիւն > տանուտրութիւն): Այդ է պատճառը, որ վերը առկոչած ուսյրենէտրութիւն բառը Դատաստանագրի ձևագրական տարրնթերցումներում վկայված է նաև՝ հայրենետրութիւն, հայրենէտէրութիւն և հայրենատրութիւն ձևերով:

Հիմք ընդունելով տանուտրութիւն բառի տուն > տանֆ + տրութիւն = կուդպակի, արհեստանոցի տուրֆ իր այս մեկնությունը, Հր. Բարթիկյանը փորձում է պարզել նաև վաղ շրջանի մի քանի վիմական բնագրերում, ինչպես և Ահարոն մագիստրոսի 1055—1056 թթ. արտոնագրի մեջ հիշատակված քաստակ հարկային տերմինի նշանակությունը: Հայագիտական գրականության մեջ քաստակ բառի ստուգաբանությունը և այդ անունով տուրքի բովանդակության քննությանը միջամուխ են եղել շատերը, սակայն այդ ուղղությամբ տակավին գոհացուցիչ արդյունքներ չեն ստացվել և չկան քիչ թե շատ ընդունելի բացատրություններ:

Հր. Բարթիկյանը չի տալիս քաստակ բառի ստուգաբանությունը, այլ առաջ է քաշում մի նոր ենթադրություն, ըստ որի, այդ անունով հարկը կարելի է դիտել իբրև նույն պախտ տանց. բյուզանդական էնիկիոնի, այսինքն՝ տնահարկի կամ իր տերմինով՝ տանուտրութիւն հարկի այլատեսակը, այն տարբերությամբ միայն, որ եթե պախտ տանց-ը գանձվել է Անի քաղաքի արհեստանոցների տերերից, ապա քաստակ-ը վճարել են կուդպակ-խանութների տերերը կամ վանառականները³², Հեղինակի այս ենթադրության համար հիմք է ծառայել սոսկ այն պարագան, որ քաստակ հարկի իրեն հայտնի բոլոր հինգ հիշատակություններն էլ պահպանվել են միայն Անիի կամ մերձակայքի արձանագրություններում (Տեկոր—1008—1014 թթ., Հոռոմոս—1013 թ., Երերույք—

³⁰ Տե՛ս J. Karst, Sempadscher kodex, Strassburg, 1905, B. I, էջ 140, 162, 171, Wörterbuch des Mittelarmentischen historisch-etymologisch, հայագետ Յ. Կարստի՝ Մատենագրանում պահվող անտիպ բնագրան, համապատասխան բառերի տալի:

³¹ Հ. Օրբելի, Գիվան, պր. 1, էջ 62, 63: Նորագույնի և Հայրավանքի օրինակները բերում ենք մեր հավաքածուից:

³² Р. Бартикан, նշվ. աշխ., էջ 122—123, 167:

1038 թ., Ալաման— 1041 թ., Անի— 1055—56 թթ., Ահարոնի արձանագրություն)³³, ըստ որում Վերջին անգամ միայն Անիում՝ պախտ տանց հարկի հետ, որ մտածել է տալիս, թե քաստակը ևս կարող էր տների պետական տուրք՝ տնահարկ լինել, մանավանդ որ թվարկված արտոնագրերում քաստակի վճարումից բնակչությանն ազատում են Բագրատունի թագավորները կամ Բյուզանդիայի կայսրուհին։ Որ քաստակը պետական հարկ է եղել, ընդունում են բոլոր պատմաբանները, բայց որ այդ հարկը տնահարկի կամ պախտ տանց-ի մի տեսակն է, հաղիվ թե հնարավոր լինի հաստատել եղած նյութերով, և այդ առթիվ Հր. Բարթիկյանի մեջ բերած ապացույցները այնքան էլ համոզիչ չեն։

Քաստակ հարկային տերմինի ստուգաբանության կամ նրա բովանդակության մասին առկա նյութերով դժվար է ասել ավելին, քան ասված է մինչև այժմ։ Մենք բավարարվում ենք այդ հարկի նոր, 6-րդ հիշատակությամբ հայագիտության լայն շրջաններին անձանոթ մի արձանագրության մատնանշուկով, որ մեր կարծիքով ղգալի նպաստ կարող է լինել քաստակ-ի բովանդակության պարզաբանմանը և հիմնովին հերքում է Բարթիկյանի հիշյալ ենթադրությունը։ Բնագիրը փորագրված է Բյուրականի տաճարի հարավային պատին և շնայած պատկառելի հնությանը, հստակ կարդացվում է. ՆՂԳ (1044) քուականութեանս հայոց այս իմ զի 'ր' է Ջաֆար է իշխանաց իշխանի, որդոյ Վահրամա, որ ազգաւ Պախղաւ (Պահլաւ—Ս. Ա.), որ ետու զԲիւրականի զքաստակն Նահանջահի՝ իմ պատրոնին հոգոյն..., հետևում է անեծքի ձևակերպումը³⁴։

Ակներև է, որ այստեղ վկայված զԲիւրականի զքաստակն, որ տվել, այսինքն՝ բյուրականցիների փոխարեն Բագրատունիների պետությանը վճարել է իշխանաց իշխան Ջաֆարե Պաշլավունին, չի կարող լինել ոչ արհեստանոցի տերերից զանձվող տնահարկ և ոչ էլ կուղապակատերերից կամ վահառականներից առնվող հարկ, քանի որ Բյուրականը շատ հեռու էր Անիից և այդպիսի հարկի գոյությունն այստեղ այնքան էլ հավանական չէ։

О ТЕРМИНЕ «ՏԱՆՈՒՏՐՈՒԹԻՒՆ» В АНИЙСКОЙ НАДПИСИ XI ВЕКА

С. А. АВАКЯН

(Р е з ю м е)

Надпись восточного катепана Византии Баграта магистроса, высеченная в 1058—1060 гг. на стене Анийского кафедрального собора, представляет большой интерес для истории хозяйства и права средневековой Армении. Несмотря на достоверную дешифровку надписи, ее содержание и по сей день остается неустановленным, ибо ряд словосочетаний и терминов текста не поддается исчерпывающему чтению и толкованию. В недавно опубликованной статье Р. Бартикян предлагает

³³ Տե՛ս ն. Ստրդիսյան, Տեղագրությունը..., էջ 206: Ալիշան, Շիրակ, էջ 171: Հ. Օրրելի, Դիվան, պր. 1, էջ 38:

³⁴ Միակ հրատարակությունը տե՛ս ն. Տեր-Մինասյան, Ամբերղաձորի հնությունները և արձանագրությունները, «էջմիածին», 1961, 5-րդ, էջ 48:

новую, коренным образом меняющую толкование всей надписи интерпретацию термина *ἡμετέριον*—не как названия византийского административно-управленческого органа в городе Ани, как полагали другие исследователи, а как налог на дома, лавки, мастерские, отождествляемый с византийскими налогами *οὐσίον* *ἡμετέριον* и эникон.

В данной статье, на основании палеографического и лингвистического анализа указанной надписи, делается попытка более точно установить общее содержание текста, дать толкование фигурирующим в нем социально-экономическим и налоговым терминам.